«ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ»

9-րդ դասարանի ավարտական քննությունների ուղեցույց

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հ/Հ	Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի	Ենթաառաջադրանքների քանակը	Առավելագույն միավորը
1	Ընտրովի պատասխանով	18	18
2	Կարճ պատասխանով	18	18
3	Ընդարձակ պատասխանով	1	4
	Ընդամենը	40	40

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԸ

1. Բառապաշար
2. Բառակազմություն
3. Ձևաբանություն
4. Շարահյուսություն
5. Թարգմանություն
6. Կապակցված խոսք գրելու հմտություն

ԱՆԳԼԵՐԵՆ

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1-3-րդ առաջադրանքները (18 ենթաառաջադրանք) ընտրովի պատասխանով առաջադրանքներ են: Ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Առաջին առաջադրանքում տրված է տեքստ և դրա վերաբերյալ 5 ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքներ՝ պատասխանի 4-ական տարբերակով, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը:

Երկրորդ առաջադրանքը կազմված է 10 նախադասությունից, ամեն նախադասության համար տրված է քերականական տարբեր կարգեր արտահայտող 4-ական տարբերակ, որոնցից պետք է ընտրել և տեղադրել ճիշտ տարբերակը:

Երրորդ առաջադրանքը կազմված է 3 նախադասությունից: Տրված են հայերեն նախադասություններ և յուրաքանչյուր նախադասության համար տրված է թարգմանության 4-ական տարբերակ, որոնցից պետք է ընտրել թարգմանության ճիշտ տարբերակը:

4-7-րդ առաջադրանքները (18 ենթաառաջադրանք) կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են: Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Չորրորդ առաջադրանքը կազմված է փոքրիկ պարբերությունից: Նախադասություններից դուրս են բերված 5 բայեր: Բայերը պետք է տեղադրել ճիշտ ժամանակաձևերով:

Հինգերորդ առաջադրանքը կազմված է 4 նախադասությունից: Այն հնարավորություն է տալիս ստուգելու աշակերտների գիտելիքները քերականությունից: Անհրաժեշտ է նախադասության մեջ գտնել ավելորդ բառը:

Վեցերորդ առաջադրանքը կազմված է 5 նախադասությունից: Նախադասությունները տրված են ուղղակի խոսքով, որոնք պետք է դարձնել անուղղակի: Առաջադրանքով ստուգվում են ուղղակի և անուղղակի խոսքի կազմության առանձնահատկությունները:

Յոթերորդ առաջադրանքում տրված են հարցերի պատասխանները և պահանջվում է կազմել ճիշտ հարց յուրաքանչյուր պատասխանի համար:

Ութերորդ առաջադրանքը ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանք է:
Առաջադրանքում տրված 10 բառերից առնվազն 7-ով պետք է կազմել կապակցված տեքստ (5-7 նախադասություն):
Այս առաջադրանքը գնահատվում է հետևյալ չափանիշներով.

1. *Բառապաշար.* եթե բառիմաստները ճիշտ են արտահայտվել և կա բառիմաստի ոչ ավելի, քան 1-2 սխալ՝ տրվում է 1 միավոր: 3 և ավելի սխալների դեպքում միավոր չի տրվում:
2. *Ձևաբանություն:* եթե նախադասությունները ձևաբանորեն ճիշտ են, տրվում է 1 միավոր: Ձևաբանական 3 և ավելի սխալների դեպքում միավոր չի տրվում:
3. *Շարահյուսություն.* եթե նախադասությունների շարահյուսությունը ճիշտ է և կա ոչ ավելի, քան շարահյուսական 2 սխալ՝ տրվում է 1 միավոր: Շարահյուսական 3 և ավելի խախտումների դեպքում միավոր չի տրվում:
4. *Ուղղագրություն.* ճիշտ ուղղագրության և մինչև 5 ուղղագրական սխալի դեպքում տրվում է 1 միավոր: 6 և ավելի տառասխալների դեպքում միավոր չի տրվում:

Ութերորդ առաջադրանքի կատարման համար տրվում է առավելագույնը 4 միավոր:

Կապակցված խոսքը չի գնահատվում, եթե՝

- խոսքը չունի ամփոփ, ավարտուն տեսք, սկիզբ, միջին մաս, ավարտ,
- նախադասությունների քանակը 5-ից պակաս է,
- գործածված չեն տրված բառերից առնվազն 7-ը:

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1-3-րդ առաջադրանքները (18 ենթաառաջադրանք) ընտրովի պատասխանով առաջադրանքներ են: Ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Առաջին առաջադրանքում տրված է տեքստ և դրա վերաբերյալ 5 ենթաառաջադրանքներ՝ պատասխանի չորսական տարբերակներով, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը և «X» նշանով նշել ձևաթղթում:

Երկրորդ առաջադրանքը կազմված է 10 նախադասությունից, ամեն նախադասության համար տրված է քերականական տարբեր կարգեր արտահայտող 4-ական տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը և «X» նշանով նշել ձևաթղթում:

Երրորդ առաջադրանքը կազմված է 3 նախադասությունից: Տրված են նախադասություններ և յուրաքանչյուր նախադասության համար տրված է թարգմանության 4-ական տարբերակ, որոնցից պետք է ընտրել թարգմանության ճիշտ տարբերակը և «X» նշանով նշել ձևաթղթում:

4-7-րդ առաջադրանքները (18 ենթաառաջադրանք) կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են: Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Չորրորդ առաջադրանքը կազմված է փոքրիկ պարբերությունից: Նախադասություններից դուրս են բերված 5 բայեր: Բայերը պետք է տեղադրել պահաջվող ժամանակաձևերով և անցկացնել ձևաթղթի մեջ:

Հինգերորդ առաջադրանքը կազմված է 4 նախադասությունից: Այն հնարավորություն է տալիս ստուգելու քերականական տարբեր երևույթներ: Անհրաժեշտ է նախադասության մեջ գտնել ավելորդ բառը և անցկացնել ձևաթղթի մեջ:

Վեցերորդ առաջադրանքը կազմված է 5 նախադասությունից, որոնցում բաց է թողնված շաղկապը: Տրված շաղկապներից պետք է ընտրել համապատասխան շաղկապը և անցկացնել ձևաթղթի մեջ:

Յոթերորդ առաջադրանքում տրված են 4 նախադասություններ՝ ընդգծված բառերով: Ընդգծված բառերի համար պետք է գտնել համապատասխան հարցական բառը և անցկացնել ձևաթղթի մեջ:

Ութերորդ առաջադրանքը ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանք է: Առաջադրանքում տրված 10 բառերից առնվազն 7-ով պետք է կազմել կապակցված տեքստ (5-7 նախադասություն):

Այս առաջադրանքը գնահատվում է հետևյալ չափանիշներով:

1. *Բառապաշար.* եթե բառիմաստները ճիշտ են արտահայտվել և կա բառիմաստի ոչ ավելի, քան 1-2 սխալ՝ տրվում է 1 միավոր: 3 և ավելի սխալների դեպքում միավոր չի տրվում:
2. *Ձևաբանություն:* եթե նախադասությունները ձևաբանորեն ճիշտ են, տրվում է 1 միավոր: Ձևաբանական 3 և ավելի սխալների դեպքում միավոր չի տրվում:
3. *Շարահյուսություն.* եթե նախադասությունների շարահյուսությունը ճիշտ է և կա ոչ ավելի, քան շարահյուսական 2 սխալ՝ տրվում է 1 միավոր: Շարահյուսական 3 և ավելի խախտումների դեպքում միավոր չի տրվում:
4. *Ուղղագրություն.* ճիշտ ուղղագրության և մինչև 5 ուղղագրական սխալի դեպքում տրվում է 1 միավոր: 6 և ավելի տառասխալների դեպքում միավոր չի տրվում:

Ութերորդ առաջադրանքի կատարման համար տրվում է առավելագույնը 4 միավոր:

Կապակցված խոսքը չի գնահատվում, եթե՝

- խոսքը չունի ամփոփ, ավարտուն տեսք, սկիզբ, միջին մաս, ավարտ,
- նախադասությունների քանակը 5-ից պակաս է,
- գործածված չեն տրված բառերից առնվազն 7-ը:

ՖՐԱՆՍԵՐԵՆ

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1-3-րդ առաջադրանքները (18 ենթաառաջադրանք) ընտրովի պատասխանով առաջադրանքներ են: Ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Առաջին առաջադրանքում տրված է տեքստ և դրա վերաբերյալ 5 ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքներ՝ պատասխանի 4-ական տարբերակով, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը:

Երկրորդ առաջադրանքը կազմված է 10 նախադասությունից, ամեն նախադասության համար տրված է քերականական տարբեր կարգեր արտահայտող 4-ական տարբերակ, որոնցից պետք է ընտրել և տեղադրել ճիշտ տարբերակը:

Երրորդ առաջադրանքը կազմված է 3 նախադասությունից: Տրված են հայերեն նախադասություններ և յուրաքանչյուր նախադասության համար տրված է թարգմանության 4-ական տարբերակ, որոնցից պետք է ընտրել թարգմանության ճիշտ տարբերակը:

4-7-րդ առաջադրանքները (18 ենթաառաջադրանք) կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են: Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Չորրորդ առաջադրանքը կազմված է 6 նախադասությունից: Նախադասություններում բաց թողած բայերը պետք է գրել նշված ժամանակաձևերով:

Հինգերորդ առաջադրանքը կազմված է 4 նախադասությունից: Այն հնարավորություն է տալիս ստուգելու աշակերտների գիտելիքները քերականությունից: Անհրաժեշտ է նախադասության մեջ գտնել ավելորդ բառը:

Վեցերորդ առաջադրանքը կազմված է 2 մասից և ընդգրկում է 4 նախադասություն: Առաջին երկու նախադասություններում ընդգծված բառը պետք է փոխարինել համապատասխան հականիշով, իսկ հաջորդ երկու նախադասություններում դրանք փոխարինել համապատասխան հոմանիշով:

Յոթերորդ առաջադրանքում տրված են հարցերի պատասխանները և պահանջվում է կազմել ճիշտ հարց յուրաքանչյուր պատասխանի համար:

Ութերորդ առաջադրանքը ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանք է:
Առաջադրանքում տրված 10 բառերից առնվազն 7-ով պետք է կազմել կապակցված տեքստ (5-7 նախադասություն):
Այս առաջադրանքը գնահատվում է հետևյալ չափանիշներով.

5. *Բառապաշար.* եթե բառիմաստները ճիշտ են արտահայտվել և կա բառիմաստի ոչ ավելի, քան 1-2 սխալ՝ տրվում է 1 միավոր: 3 և ավելի սխալների դեպքում միավոր չի տրվում:
6. *Ձևաբանություն:* եթե նախադասությունները ձևաբանորեն ճիշտ են, տրվում է 1 միավոր: Ձևաբանական 3 և ավելի սխալների դեպքում միավոր չի տրվում:
7. *Շարահյուսություն.* եթե նախադասությունների շարահյուսությունը ճիշտ է և կա ոչ ավելի, քան շարահյուսական 2 սխալ՝ տրվում է 1 միավոր: Շարահյուսական 3 և ավելի խախտումների դեպքում միավոր չի տրվում:
8. *Ուղղագրություն.* ճիշտ ուղղագրության և մինչև 5 ուղղագրական սխալի դեպքում տրվում է 1 միավոր: 6 և ավելի տառասխալների դեպքում միավոր չի տրվում:

Ութերորդ առաջադրանքի կատարման համար տրվում է առավելագույնը 4 միավոր:

Կապակցված խոսքը չի գնահատվում, եթե՝

- խոսքը չունի ամփոփ, ավարտուն տեսք, սկիզբ, միջին մաս, ավարտ,
- նախադասությունների քանակը 5-ից պակաս է,
- գործածված չեն տրված բառերից առնվազն 7-ը: